ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 28-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. 2020 թվականի օգոստոսի 27-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2020 թվականի օգոստոսի 26-ի «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին» ՎԴ2/0271/05/18 վարչական գործով որոշումը:

Վերոհիշյալ որոշմամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝սահմանադրականության հարցերը:

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը նշել է, որ «…եթե Վարչական դատարանը կիրառի Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասը և 28-րդ հոդվածի 3-րդ մասը և ձեռք բերի լրացուցիչ ապացույցներ վիճելի փաստի վերաբերյալ, կխախտի կողմերի միջև «արդարացի հավասարակշռումը» և «զենքերի հավասարությունը»: Արդյունքում նաև դատավարությունը չի լինի մրցակցային, այլ դատարանը կստանձնի հայցվորի կողմից իրավախախտում թույլ տալու փաստը հաստատելու պատասխանողի դատավարական դերը: Վերջնարդյունքում կխախտվի արդարացի քննություն ստանալու հայցվորի իրավունքը…»:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը նշում է նաև, որ «…Վերաքննիչ վարչական դատարանի սահմանած ծավալի պայմաններում Վարչական դատարանն իրավասու չէ մեկնաբանել այդ նորմերն այնպես, որ չխախտվի մրցակցությունը: Ուստի եթե Սահմանադրական դատարանը մեկնաբանի տվյալ դրույթներն այնպես, որ դրանք դատարանին չեն լիազորում ձեռք բերել լրացուցիչ ապացույցներ այնպիսի փաստերի վերաբերյալ, որոնք օրենքի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, ըստ այդմ՝ գտնի, որ դրանք համապատասխանում են Սահմանադրությանը, վերջինս «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով լիազորված է ճանաչել վիճարվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող՝ իր մեկնաբանությամբ: Այդ դեպքում Սահմանադրական դատարանի մեկնաբանությունը ուղենիշ կլինի Վարչական դատարանի համար կոնկրետ գործն արդարացի լուծելու համար»:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ այն չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջներին, և առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն ամրագրվել է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով: Իսկ հիշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող դրույթի կիրառման միջոցով:

Հարկ է նշել նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 4-րդ գլխով սահմանվում են Սահմանադրական դատարան դիմելու ընդհանուր իրավակարգավորումները, որոնք պարտադիր են Սահմանադրական դատարան դիմող բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ դատարանների համար: Հիշյալ գլխով կանոնակարգվում են նաև գործի քննությունը մերժելու (29-րդ հոդված) հետ կապված հարցերը:

Օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է, որ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, ի թիվս այլ հիմքերի՝ եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան (2-րդ կետ):

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական դատավարության օրենսգրքի «Փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելը» վերտառությամբ 5-րդ հոդվածի սույն դիմումով վիճարկվող 1-ին մասով սահմանվում է, որ «Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex

officio")»: Իսկ Վարչական դատավարության օրենսգրքի «Ապացույցներ ներկայացնելու պարտականությունը» վերտառությամբ 28-րդ հոդվածի սույն դիմումով վիճարկվող 3-րդ մասով սահմանվում է, որ «Գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ»: Վերջիններս վարչական դատարավության սկզբունք ամրագրող և ընդհանուր իրավակարգավորող դրույթներ են:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը **բավարար չի հիմնավորել** իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ:

Միաժամանակ հարկ է նշել, որ դիմողի հիմնավորումներից հետևում է՝ դրանք առավելապես վերաբերելի են կոնկրետ գործի լուծման համար կիրառման ենթակա դրույթների իրավական բովանդակության բացահայտման, մեկնաբանության և կիրառության, այլ ոչ՝ սահմանադրականության հարցերին:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի, վերջիններիս որևէ դրույթի իրավական բովանդակության բացահայտման և միատեսակ կիրառության ապահովման իրավասությունը Սահմանադրությամբ և օրենքով վերապահված է եռաստիճան դատական համակարգին, և դիմողի կողմից բարձրացված հարցերը լուծելի են օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառման համապատասխան նախադեպի շրջանակներում:

Ելնելով վերոշարադրյալից, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և 28-րդ հոդվածի

3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

19 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴԱՈ-183